Հավելված
ՀՀ վարչապետի
N 1317-Ա որոշման

Ց Ա Ն Կ
«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	**Իրավական ակտի վերնագիրն ու տեսակը**	**Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու կամ ընդունելու համար պատասխանատու պետական կառավարման մարմինը**	**Իրավական ակտի նախագիծը ներկայաց-նելու ժամկետը**	**Իրավական ակտի ընդունման առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը**	**Իրավական հիմքը**
1.	«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառ-ման 2022-2027 թվականների համալիր ծրագիրը հաստա-տելու մասին» կառավարու-թյան որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամու-թյուն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետ

2.	«Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների փոխակերպման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ե» ենթակետ
3.	«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող տեղեկատվության և հաղորդակցության, այդ թվում՝ վեբ բովանդակության մատչելիությունն ապահովող ընդհանուր պահանջները, ստանդարտները, նորմերը և կանոնները» հաստատելու մասին բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի հրամանի ընդունում	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մաս

4.	«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը նպաստող ֆիզիկական միջավայրի մատչելիությունն ապահովող ընդհանուր պահանջները, ստանդարտները, նորմերը և կանոնները հաստատելու մասին» քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի ընդունում	Քաղաքաշինության կոմիտե	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մաս
5.	«Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային համակարգի և ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների հարմարեցման ծրագրի հիմնական սկզբունքներն ու լրացուցիչ պահանջները հաստատելու մասին» տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանի ընդունում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մաս

6.	«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում (ժեստերի լեզվով համաժամանակյա թարգմանությամբ և (կամ) հայերեն բաց և փակ ենթագրերով (համաժամանակյա գրավոր նկարագրությամբ) հեռարձակվող տեսալսողական հաղորդումների եթերաժամերի և հեռարձակվող հաղորդումների քանակի աստիճանական և շարունակական ավելացման նպատակով)	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս
7.	«Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող մատչելիության պահանջները հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 8-րդ մաս

8.	«Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մաս
9.	«Անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը և պայմանները հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.11.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ